ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 04.03.2019թ. հ.01/58Մ գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժինը ստացել է քաղաքացի Էդգար Արմենի Ֆրանգյանի կողմից Նորաշեն թաղամասի հ.21 շենքի հ.1/1 հասցեին կից՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում, քարե շարվածքով պատի կառուցման ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակցի կողմից ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ հ.029067 արձանագրությունը: Նշված հոդվածի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելն առաջացնում է տուգանքի նշանակում 400.000 ՀՀ դրամի չափով: Իրականացրած շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշման N4 հավելվածի N1 ցանկով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների ցանկում: Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի քննության արդյունքում՝ 23.01.2019թ. «Վարչական տույժ նշանակելու մասին» հ.Վ-2/37 որոշմամբ քաղաքացի Էդգար Արմենի Ֆրանգյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Միաժամանակ տեղեկացվում է, որ քաղաքացի Էդգար Ֆրանգյանի կողմից քննարկվող քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելու համար դիմում, հայտ չի ներկայացվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ